ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց»

ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա **Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում**

Դպրոց **Վայքի ավագ դպրոց**

Ուսուցիչ **Մարինե Մարտիրոսյան**

Ղեկավար **Կիմա Օհանեսյան**

ՎԱՅՔ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԻՆՉ Է ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՈՐՈՆՔ ԵՆ ԴՐԱ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ.....6

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՀԱՄՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....10

Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասաժամերին.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....16

Գրականության Ցանկ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն բացվող օր իր հետ նոր հրաշք է բերում՝ ստիպելով
մեզ շարունակել շնչել ,երազել ու արևի տակ քայլել

ՊԱՈՒԼՈ ԿՈԵԼՈ

Թեմայի ընտրության պարզաբանում: Հետազոտական աշխատանքս նվիրված է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնական առանձնահատկությունների բացահայտմանը, որոնք առավելապես դիտարկելու եմ հայոց լեզու և գրականություն առարկայի դասավանդման համատեքստում:Իսկ թե ինչու ընտրեցի այս թեման ,պարզաբանեմ: Արժեքների ձևավորումն անվերջ պտտվում է մեր շուրջը,միայն մնում է դրանք ընկալել,վերցնել ,յուրացնել: Արժեք կարող է ձևավորվել ,երբ ծաղկից հոտ ես քաշում,երբ գետից գոնե մեկ հատ ձուկ ես որսում,երբ երաժշտություն ես լսում,երբ օգնում ես ինչ-որ մեկին,անգամ երբ վիճում ես որևէ մեկի հետ:Բոլոր արժեքների կրողը անհատն է ,և այդ արժեքները նրա մոտ սկսում են ձևավորվել դեռևս մոր արգանդում, որը դառնում է շարունակական և ուղեկցում մարդուն իր ողջ կյանքի ընթացքում: Կոելոյի վերոնշյալ միտքն արթնացնում է այն լավատեսությունը ,որը մեզ պետք է ուղեկցի յուրաքանչյուր բացվող օրվա հետ:

Թեմայի արդիականությունը: Կրթության դերն ու նշանակությունը կայանում է ոչ միայն աշակերտներին գիտելիքներ փոխանցելու, այլև այնպիսի արժեքներ սերմանելու մեջ, որոնք հետագայում կապահովեն կայուն և բարձր արժեքներ ունեցող անհատների առկայություն:Այս գործի մեջ շատ կարևոր է դպրոցի դերն ու նշանակությունը:

Իրականում կարող է թվալ, որ կրթության տրամադրումն արդեն իսկ ինչ-որ չափով ենթադրում է արժեքային համակարգի ձևավորում, սակայն գտնում եմ, որ այս հարցում ամեն բան այնքան էլ պարզ չէ, որքան կարելի է պատկերացնել, ուստի այս ոլորտում անելիքները շատ են և անհրաժեշտ:

Այո՛, դպրոցում աշակերտները ստանում են տարբեր գիտելիքներ մի շարք առարկաներից, սովորում են գրել և կարդալ, հաշվարկներ կատարել, հասկանալ բնական մի շարք երևույթների պատճառն ու ծագումը և այլն: Սակայն այս գիտելիքների, տեղեկատվության տրամադրման հոսքում կարող է երկրորդ պլան մղվել

աշակերտներին համապատասխան արժեքներով դաստիարակելու կարևորագույն խնդիրը, ուստի նման հարցի դիտարկումն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում:

Գտնում եմ, որ եթե տեսական գրականության շրջանակներում առկա են մի շարք մոտեցումներ ուսուցման մեթոդների, դրանց առավելությունների, ինչպես նաև կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, ապա նույնը չենք կարող ասել աշակերտների մեջ արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ: Ընդ որում, խնդիրը կայանում է ոչ այնքան այդ թեմայի վերաբերյալ համապատասխան գրականության բացակայության, որքան այդ գաղափարների իրագործման և այդ ուղղությամբ համապատասխան քայլերի ձեռնարկման մեջ: Երբ ինձ հարցնեն ՝ որն է ամենաստացված ժամանակակից մեթոդը, ես կասեմ՝ դա անմնացորդ նվիրումն է ու սերը աշխատանքի նկատմամբ: Արժեքային համակարգը անթերի կձևավորվի այն սովորողի մոտ , ում դասավանդում է բարձր արժեքներով օժտված մանկավարժը:

Ըստ տարբեր դիտարկումների թե՛ սուբյեկտիվ, թե՛ օբյեկտիվ պատճառներով ուսուցման գործընթացը կենտրոնանում է գլխավորապես նախատեսված նյութը աշակերտներին հավուր պատշաճի մատուցելու վրա, ինչի արդյունքում մի շարք դեպքերում արժեքային համակարգի ձևավորումը մղվում է երկրորդ պլան:

Վերոնշյալ հիմնախնդիրների առկայությամբ էլ պայմանավորված է սույն թեմայի արդիականությունը, քանի որ սովորողների մեջ համապատասխան արժեքների ձևավորման վերաբերյալ արդյունավետ մեթոդների մշակումն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում ոչ միայն կրթության որակի բարելավումը, այլև բարձր արժեքներ ունեցող անհատների միջոցով քաղաքացիական հասարակության մեջ արժեքների ձևավորումը:

21-րդ դարում,երբ ամենուրեք տիրում է ամենազոր մեդիան,գիտելիքների յուրացումը պետք է իրականացվի ակտիվ ոչ թե պասիվ հենքի վրա: Ջոն Դյուիի այն դրույթը,թե պետք է աշակերտին օգնել գիտելիքը ակտիվորեն յուրացնելու և ոչ թե նրան դարձնել պասիվ ընդունող,հետագայում պատկերավոր կերպով ձևակերպել է Քոմեջերը "Երեխան անոթ չէ ,որը պետք է լցնել,այլ ջահ որը պետք է վառել"[1]: Իրոք շատերն են մեզ սովորեցնում ,բայց քչերն են դառնում մեզ համար ուսուցիչ,այդ կայծը տալիս, լուսավորում:

Թեմայի նպատակը: Այս թեմայի ուսումնասիրության իրականացմամբ նպատակ եմ հետապնդում իրականացնել սովորողների մեջ արեժքային համակարգի

ձևավորման հիմնական մեթոդներն ու դրանց առանձնահատկությունները կոնկրետ հայոց լեզու և հայ գրականություն առարկայի դասավանդման շրջանակներում:

Վերոնշյալ նպատակի իրագործման համար իմ առջև դրել եմ հետևյալ խնդիրները.

- Բացահայտել արժեքային համակարգի ձևավորման հիմնական նախադրյալներն ու պայմանները,
- Ուսումնասիրել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման մեթոդներն ու դրանց կիրառման առանձնահատկությունները,
- Վերլուծել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման մեթոդների կիրառման առանձնահատկությունները կոնկրետ դասընթացի շրջանակներում:

Ի՞ՆՉ Է ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴՐԱ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Արժեքային համակարգի սահմանումը, էությունն ու նշանակությունը

Տուր ինձ կարևորն անկարևորից տարանջատելու
ունակություն,և տուր ինձ ուժ ինքնատիրապետման
և չափավորության,որ չգայթակղվեմ ես կյանքով:
Այլ խելամտորեն կազմակերպեմ օրվա ընթացքն իմ:
ԱՆՏՈՒԱՆ ԴԸ ՍԵՆՏ- ԷՔՋՅՈՒՊԵՐԻ

«Արժեք» բառն առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է արժանի լինել «Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, երբ նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ[2]»:

Գտնում ենք, որ արժեքների ձևավորման, արժեհամակարգի հստակեցման ամբողջ գործընթացը դիտվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացների հետ միասին և կազմում նրա անբաժանելի մասը՝ պայմանավորելով անձի վարքը:

Արժեքը երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել, վճարում ենք և դեռ վճարելու ենք:

Արժեքները կարող են տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը:Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլեւ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:

Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բունը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է այն ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը:Այս դիտարկման հիմնավորումը ստացել եմ գրականության դասաժամերից մեկի ընթացքում ,երբ վերլուծում էինք "Զաբուղոն " նովելը,այն հարցին ,թե դավաճանությունն ինչ հիմնավորում ունի,աշակերտներից մեկը պատասխանեց ,որ դավաճանությունը ստորություն է: Սա խոսում է այն մասին ,որ դավաճանությունը ընկալվեց ճիշտ և յուրաքանչյուր աշակերտ ճիշտ է կողմնորոշվելու այդպիսի միտում ունենալու դեպքում:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի

ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինի իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: "Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը"[3:] «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը :Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: "Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի

բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի"[5]: Ամփոփելով վերոնշյալ տեսակետներն ու մոտեցումները՝ կարող ենք նշել, որ արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է դպրոցի կարևոր առաքելություններից մեկը, ուստի այն պետք է դառնա ուսուցման գործընթացի անբաժանելի տարր և իրականացվի ուսուցման յուրաքանչյուր մեթոդին զուգահեռ:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՀԱՍՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առհասարակ յուրաքանչյուր գործընթաց ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է կիրառել հստակ մեթոդաբանություն: Մեթոդներն այն հնարները, եղանակներն ու միջոցներն են, որոնց շնորհիվ հնարավոր է հասնել այն արդյունքին, որին ձգտում ենք: Ուսուցման գործընթացի կազմակերպման հարցում ևս կիրառվում են մի շարք մեթոդներ, ժամանակ առ ժամանակ դրանք ենթարկվում են մի շարք փոփոխությունների, հարմարվում են նոր մարտահրավերների, որպեսզի առավելագույնս կատարեն իրենց գործառույթը:

Ինչպես ուսուցման գործընթացի կազմակերպման, այնպես էլ սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման հարցում կարևոր է ունենալ հստակ մեթոդների առկայություն: Ըստ այդմ, աշխատանքի այս հատվածում ցանկանում ենք դիտարկել սովորողների արժեհամակարգի ձևավորման մեթոդները, ինչպես նաև դրանց կիրառման առանձնահատկությունները:

Նախ, հարկ ենք համարում նշել, որ տեսական գրականության ուսումնասիրման արդյունքում պարզ դարձավ, որ սովորողների արժեհամակարգի ձևավորման մեթոդների վերաբերյալ տեսական աղբյուրներ առկա չեն, ինչի արդյունքում ստացվում է, որ սույն աշխատանքի շրջանակներում մեր կողմից են առաջարկվելու համապատասխան մեթոդները, ինչն ավելի է բարձրացնում սույն աշխատանքի արժեքը:

Գտնում ենք, որ մեթոդների մշակումն ինքնին ընթացող երևույթ չէ և այն պետք է ձևավորվի մի շարք նախադրյալների առկայության պայմաններում: Ըստ այդմ, նախ ցանկանում ենք նշել, թե ինչ գործոններ են ազդում սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա, որպեսզի դրանց միջոցով փորձենք վեր հանել այն հիմնական մեթոդները, որոնց կիրառմամբ հնարավոր է սովորողների մեջ ձևավորել համապատասխան արժեհամակարգ:

Տեսական գրականության ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա ազդում են ավանդական միջոցները,

այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով[6]:

Հաջորդ կարևոր գործոնը, որն ազդում է սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա տարիքային գործոնն է, քանի որ տարբեր տարիքային խմբեր ունեն տարբեր արժեքներ, տարբեր պատկերացումներ և աշխարհընկալում, ուստի նրանց արժեհամակարգի վրա ազդող գործոնների ուսումնասիրման արդյունքում կարևոր է հաշվի առնել տարիքային շեմը:

Մյուս կարևոր գործոնը, որ ազդում է սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա միջանձնային հարաբերություններն են, քանի որ շատ կարևոր նշանակություն ունեն այն մարդիկ, ովքեր շրջապատում են աշակերտներին, իսկ այս հարցում հատկապես մեծ է ուսուցիչների դերը:

Ուստի գտնում ենք, որ ինչպես ընտանիքն, այպես էլ դպրոցը մեծ ազդեցություն ունեն սովորողների աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորման վրա, որի արդյունքում կարող ենք նշել, որ սովորողների արժեհամակարգի ձևավորման հարցում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները.

- Օրինակ ծառայել,
- Նկարագրել-հիմնավորել,
- Պատկերացնել
- Համեմատել,
- Գնահատել:

Քննարկենք վերոնշյալ մեթոդներն ու դրանց բովանդակությունը. ասվում է հայտնի ասացվածքում, «Երեխաները չեն լսում մեզ, նրանք նմանակում են մեզ»: Միանշանակ համամիտ ենք վերոնշյալ մտքի հետ, իրապես, սովորողների արժեհամակարգի

ձևավորման համար անհրաժեշտ է նախ և առաջ համարժեք օրինակ ծառայել, այնպիսի վարքագիծ դրսևորել, ինչպիսի վարքագիծ ակնկալվում է աշակերտներից: Օրինակ՝ եթե ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտները դրսևորեն ազնիվ վարքագիծ, առաջին հերթին ինքը պետք է աշակերտների աչքերում հանդես գա անզիվ վարքագծով:

Նկարագրել-հիմնավորելու մեթոդը կայանում է խոսքով սովորողների մեջ արժեքային համակարգ ձևավորելու հնարավորությունը, սակայն այստեղ միայն խոսքը չի կարող աշխատել, կարևոր է հիմնավորել ամեն գաղափար և տեսակետ պրակտիկ օրինակներով, որպեսզի աշակերտի համար համոզիչ լինի:

Պատկերացնելու մեթոդը ևս շատ հետաքրքիր է, այն կայանում է տարբեր արժեքների կրողների վարքագիծը պատկերացնելով, որի արդյունքում սովորողները հստակ պատկերացնում են, որ օրինակ հայրենասեր և օրինապաշտ քաղաքացու վարքագիծը դրական կարծիք է ձևավորում այդ անձի մասին, ինչի շնորհիվ աշակերտների մոտ ևս ձևավորվում է հայրենասեր և օրինապաշտ լինելու արժեհամակարգ:

Համեմատելու մեթոդը ևս շատ կարևոր է, որի շնորհիվ հնարավոր է դառնում դիտարկել երկու տարբեր արժեքներ կրող անձանց և գնահատել վերջիններս որակները, ինչի արդյունքում էլ աշակերտները իրենք իրենց համար ևս սկսում են ընտրել այն վարքագիծը, որը բնորոշ է բարձր և որակյալ արժեքներ կրող անձին:

Գնահատելու մեթոդն անմիջականորեն կապված է համեմատելու մեթոդի հետ, մասնավորապես տարբեր արժեհամակարգ ունեցող մարդկանց համեմատելու արդյունքում սովորողները սկսում են գնահատել, թե որ արժեքներ կրող մարդիկ են առավել նախընտրելի, ինչի արդյունքում էլ սկսում են գնահատել իրավիճակներն ու դրանց շրջանակներում համապատասխան վարքագիծ ընտրելու հնարավորությունները:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ ուսուցման գործընթացի շրջանակներում չափազանց կարևոր է ուսուցչի կողմից վերոնշյալ մեթոդների կիրառմամբ սովորողների մոտ համապատասխան արժեհամակարգի ձևավորումը, քանի որ դպրոցը ոչ միայն կրթություն փոխանցելու, այլև համապատասխան արժեհամակարգ ձևավորելու համար է: Եվ վերջապես կրթությունը կյանքի նախապատվություն չէ, այլ հենց կյանքն է:

Սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունները հայոց լեզվի և գրականության դասաժամերին

Ինչպես արդեն նշեցինք նախորդ շարադրանքում, սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման հարցում պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցություն են գործում սովորողների վրա: Այդ հանգամանքներն են ինչպես ավանդական պատկերացումները, այնպես էլ տարիքային գործոնն ու սովորողներին շրջապատող աշխարհն ու մարդիկ:

Նախորդ շարադրանքի շրջանակներում ներկայացրինք նաև այն հիմնական մեթոդները, որոնք, մեր դիտարկմամբ, կարող են կիրառվել որպես արժեհամակարգի ձևավորման միջոցներ:

Գտնում ենք, որ մայրենի լեզվի դասավանդման շրջանակներում առկա են բարենպաստ պայմաններ աշակերտների մեջ համապատասխան արժեհամակարգ ձևավորելու առումով:

Առաջին հերթին, կարևոր և անհրաժեշտ արժեք է մայրենի լեզվի նկատմամբ սիրո սերմանումը, քանի որ հայրենասիրությունն ու ազգապահպան մտածելակերպը սկսվում է լեզվից ու լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Դժվար է հայրենասեր անվանել այն անձին, ով շարունակ կիրառում է օտարալեզու բառեր՝ չիմանալով դրանց համարժեք հայերեն տարբերակները:

Հաջորդ կարևոր գաղափարը գրականության դասի շրջանակներում տարբեր հերոսների մարդկային որակների դիտարկումն է, ինչն էլ արժեհամակարգ ձևավորելու լավագույն մեթոդներից մեկն է: Այս առումով գտնում ենք, որ թերևս գրականությունը լավագույն դասընթացն է աշակերտների մոտ համապատասխան արժեհամակարգ ձևավորելու հարցում, քանի որ գրականության դասընթացի շրջանակներում են աշակերտները հնարավորություն ստանում պատկերացում կազմելու տարբեր արժեքների մասին, առհասարակ հասկանալու՝ ինչ է արժեքը, ինչպիսի պատկեր ունի

այն հերոսը, որը կրում է դրական և բարձր արժեքներ: Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանք իկողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է ՝ դաստիարակել հայրենասեր սերունդ:Արցախի գոյապայքարի այսօրվա մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը:Այս հարցն ավելի սուր է անդրադառնում մեր օրերում ,որովհետև Արցախի ապագան վտանգված է , իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հաբրենասիրություն սերմանող ուսուցիչը,ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր, վկան՝ Արցախի քառօրյա պատերազմը, Արցախի քառասունչորսօրյա պատերազմը: Լավագույն արժեքների հասնելու գլխավոր ջահակիրը հայ գրականություն առարկայի յուրաքանչյուր դասաժամն է: Օրինակներ անվերջ կարելի է բերել ՝ գեղեցիկի ընկալում -"Ալպիական մանուշակ", մարդ կոչմանն արժանանալու -Հովհաննես Թումանյան, արդարության գաղափարը - "Համբերանքի չիբուխը", հայրենասիրության գաղափարը :

Հայրենասիրության գաղափարի ընկալման իմ փորձը կներկայացնեմ դասի պլանի իմ օրինակով (տես հավելվածը):

Ողջ վերոգրյալը մեզ հնարավորություն է տալիս եզրահանգելու, որ մայրենի լեզվի դասավանդումն արդեն իսկ նպաստում է սովորողների մոտ ճիշտ արժեհամակարգի ձևավորմանը, սակայն այդ դասընթացի շրջանակներում ևս ուսուցչից պահանջվում է կատարել որոշ քայլեր, որոնք կնպաստեն բարձր ու վեհ արժեքների փոխանցմանը, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել որակյալ արժեքներ կրող անհատների ձևավորում: Ավագ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն առարկայի դասավանդումը սովորողների մեջ պետք է ձևավորի ՝

* խոսքի միջոցով իր անձի հանդեպ համակրանք առաջացնելու, իր և ուրիշների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու կարողություն

* հայոց լեզվի և հայ գրականության նկատմամբ գիտակցված , ազգային արժանապատվությամբ զուգորդված վերաբերմունք,համամարդկային մշակույթի մեջ նրա արժանի տեղի ըմբռնում

* հայ գրականության գաղափարական և հոգեբանական հարստության ընկալումով իր ժողովրդի կյանքն ու ճակատագիրը ըմբռնելու կարողություն

* ինքնաճանաչման, ինքնակրթության ,ինքնակատարելագործման շարունակական ձգտում, գիտելիքներն ու հմտությունները, բարոյական սկզբունքները կյանքում կիրառելու ցանկություն և կարողություն

* կյանքում և կենցաղում դրսևորվող գեղագիտական բարձր ճաշակ ստեղծագործական մոտեցում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով աշխատանքի շրջանակներում ներկայացված մոտեցումներն ու տեսակետները, իրականացնելով դրանց համալիր վերլուծություն՝ կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

- Կրթության տրամադրումը ենթադրում է ոչ միայն գիտելիքների փոխանցում, այլև համապատասխան արժեհամակարգի ձևավորում, բարձր և որակյալ արժեքների փոխանցում և կայուն արժեքներ կրող անհատների առկայության ապահովում:
- Սովորողների արժեհամակարգի ձևավորումը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որը պետք է իրականացվի ուսուցման յուրաքանչյուր մեթոդի կիրառմանը զուգահեռ և հանդիսանա ուսուցման պարտադիր բաղադրատարրերից մեկը:
- Սովորողների արժեհամակարգի ձևավորման մեթոդների ընտրության հարցում պետք է ուշադրություն դարձնել արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոններին, որոնք են՝ ավանդական, տարիքային, միջանձնային:
- Հայոց լեզվի և գրականության դասընթացներն իրենց բնույթով և բովանդակությամբ հարուստ են այնպիսի արժեքներով և գաղափարներով, որոնց փոխանցումը սովորողներին կարող է ապահովել համապատասխան արժեհամակարգի ձևավորում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- Առաջարկում ենք ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորման հարցում կիրառել օրինակ ծառայելու, նկարագրել-հիմնավորելու, պատկերացնելու, համեմատելու և գնահատելու մեթոդները:
- Առաջարկում ենք հայոց լեզվի դասընթացի շրջանակներում որպես սովորողներին փոխանցվող արժեք ընդգծել հայոց լեզվի՝ որպես մայրենի
  լեզվի նկատմամբ սերը, սերմանել այն պահպանելու, համացանցում հայատառ գրելու, հայերեն խոսելու գաղափարները:
- Առաջարկում ենք գրականության դասընթացի շրջանակներում սովորողների արժեհամակարգի ձևավորման հարցում շեշտը դնել տարբեր հերոսների բնավորության վերլուծության և այդ ձևով նրանց կրած արժեքների վերհանման վրա:

- Առաջարկում ենք գրականության դասընթացի շրջանակներում համեմատելու և գնահատելու մեթոդների կիրառմամբ գրական տարբեր հերոսների հատկանիշների վերհանմամբ ձևավորել բարձր և վեհ արժեքներ ու ձգտել դառնալ այդ արժեքների կրողը:

Գրականության Ցանկ

- Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, «Ընտանիք և ազգային հոգեբանություն», նյութերի ժողովածու, Երևան, 1991:
- Թոփուզյան Ա., Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները, Մանկավարժական միտք, Զանգակ հրատ., Երևան, 2012:
- Փախչանյան Ա., Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները», Երևան, 2018, https://mediamax.am/am/column/12925/
- Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, Երևան, 2018

Լրացուցիչ հղումներ

1: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:

[1] Лавриненко В. Философия, Учебник, М., 2004, էջ 401:

[2] Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, «Ընտանիք և ազգային հոգեբանություն», նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 38:

[3] Ա. Փախչանյան, Դպրոցը, արժեքները և տարատեսակ «ազատությունները», Երևան, 2018, https://mediamax.am/am/column/12925/

[4] Ի. Փարեմուզյան, Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, էջ 396:

[5] Ի. Փարեմուզյան, Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, էջ 398:

[6] Ի. Փարեմուզյան, Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, էջ 397

Հավելված

Օրվա դասի պլան

Ամսաթիվ՝ **20.09.2022թ.**
Առարկա՝ **հայ գրականություն**
Դասարան՝ **10-րդ**
Թեմա՝ **Մ.Խորենացու,,Ողբը,,**

Նպատակ՝

- յուրացնել ,,Ողբ,,-ի բովանդակությունը
- հասկանալ գրելու շարժառիթը և նպատակը
- ընկալել ,,Ողբը,,՝որպես հայրենասիրության բարձրագույն դրսևորում
- զարգացնել համագործակցելու հմտությունները

Վերջնարդյունքներ՝

- կարողանա վերլուծել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին
- կարողանա վերլուծել ժամանակաշրջանի իրադարձությունները և համեմատել արդի ժամանակների հետ
- ճանաչի իր դերը և պատասխանատվությունը հասարակական- քաղաքական կյանքում

Կարողունակություններ՝

- լեզվական գրագիտության կարողունակություն
- սովորել սովորելու կարողունակություն
- ժողովարդավարական և քաղաքացիական կարողունակություն
- մշակութային կարողունակություն

Անհրաժեշտ նյութեր՝

- Համակարգիչ
- տետր
- ուսումնական նյութ

Միջառարկայական կապ՝

- հայոց պատմություն
- մշակույթ

Մեթոդներ՝

- հարցուպատասխան
- խմբային աշխատանք

Դասի ընթացքը

Հարցուպատասխանի միջոցով 5-րդ դարի պատմիչների շարադրած ժամանակաշրջանը ներկայացնել, ապա անդրադառնալ Խորենացու 'Պատմությանը':Աշակերտները կբացատրեն, թե ինչ է ողբը, երբ է ձևավորվել: Կնշվի, որ այն ձևավորվել է բանահյուսության մեջ հնագույն
ժամանակներում, իսկ Խորենացու 'Ողբ'-ով հիմք է դրվել միջնադարյան ողբագրության:

Իմաստի ընկալման փուլ

Կատարել խմբային աշխատանք;Դասարանը բաժանել 4 խմբի և յուրաքանչյուր խմբին տալ հանձնարարություն:Նախօրոք պետք է հոգալ, որ բոլորն ունենան բնագիրը:

1-ին խումբ

՝Ողբ՝-ից դուրս գրել հայ ժողովրդի բնավորության բոլոր մերժելի ,կործանարան գծերը, որոնք թվարկում է Խորենացին:

2-րդ խումբ

՝Ողբ՝-ից դուրս գրել այն տողերը,որոնք, իրենց կարծիքով, խիստ արդիական են :

3-րդ խումբ

՝Ողբ՝-ից դուրս գրել այն տողերը, որոնցից երևում են, թե ինչու է ողբում Խորենացին:

4-րդ խումբ

Գրել, թե ինչպես կուզենար տեսնել իր ազգը Խորենացին:

Քննարկել յուրաքանչյուր խմբի պատասխանը:

Կշռադատման փուլում կազմել Վենի դիագրամ՝ նշելով նմանությունները, տարբերությունները և ընդհանրությունները:

Վերջում լսել մեկ հատված Խորենացու ՝Ողբ՝-ից գրաբարով: